ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

**«09» հոկտեմբերի 2020 թվական N 166-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑԻ N 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ»-Ի ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ 60,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Ջանան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մանե Մկրտչյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2020 թվականի սեպտեմբերի 04-ին N 12492 թվագրությամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2017651 վկայական) Գյումրի քաղաքի Վարպետաց փողոցի N 101 հասցեում գտնվող «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան»-ի նկուղային հարկի 60,6 (վաթսուն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը՝ 1 (մեկ) տարի ժամկետով, վարձակալության հիմունքներով տրամադրել «Ջանան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մշակութային միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպման նպատակով:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված անշարժ գույքի վարձակալության շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ-10251911 հաշվետվությունը, տարածքի վարձակալության ամսական վարձավճար սահմանել 59 000 (հիսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Հ. Կարապետյան ____________

Տ. Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ______________

Լ.Սանոյան ______________

Վ. Եդիգարյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Գ. Սարգսյան ______________

Տ. Փանոսյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Ա. Մխիթարյան ______________

Ա.Աղանյան ______________

Հ. Եղիազարյան ______________

Լ. Բարսեղյան ______________

Ա.Վարդանյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ. Մաթևոսյան ______________

Ա. Ղարաղազարյան ______________

Հ.Պողոսյան ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«09» հոկտեմբերի 2020 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3 26 00
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» դեկտեմբերի 2019 թվական N 212-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑ 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» - Ի ՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ 60,6 (ՎԱԹՍՈՒՆ ԱՄԲՈՂՋ ՎԵՑ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ կետով. հիմք ընդունելով «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն՝ Արա Պապանյանի, «Ձանան» սահմանափակ պատասխանատվության ընկերության գործադիր տնօրեն Մանե Մկրտչյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (համայնքապետարանում մուտքագրված՝ 2019 թվականի սեպտեմբերի 23-ին համապատասխանաբար NN 13179 և 13182 թվագրությամբ), համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, «Ա.Գ.Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված անշարժ գույքի վարձակալության շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2019թվականի հոկտեմբերի 25-ի N 10251911 հաշվետվությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N [illegible] վկայական) Վարպետաց փողոց 101 հասցեի 116.18 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր նկուղային տարածքից 60.6 (վաթսուն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր տարածքը՝ (այսուհետ՝ տարածք) 1 (մեկ) տարի ժամկետով մշակութային միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպման նպատակով տրամադրել «Ձանան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը:
2. Տարածքի ամսական վարձավճարի չափ սահմանել՝ 59 000 (հիսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

| Կողմ (27) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Ս. Բալասանյան ____________________

Ա. Ադամյան ____________________

Հ. Կարապետյան____________________